«ԵՐԵՎԱՆԻ Հ.110 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի

# ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ

2022 – 2023 ուստարի

# Ներածություն

Դպրոցը արվեստանոց է, որտեղ ձևավորվում է աճող սերնդի միտքը, հարկավոր է այն ամուր պահել, եթե չես ցանկանում ձեռքից բաց թողնել ապագան:

2022-2023 ուստարին դպրոցը սկսել է 262 աշակերտով՝ ձևավորված 9 դասարանով:

Նոր ուսումնական տարին հայտարարված է որակի տարի: Տարին հատկանշական է նրանով, որ ՀՀ բոլոր հանրակրթական դպրոցները իրականացնում են համընդհանուր ներառական ծրագիր: Ծրագրի իրականացմանը պետք է նպաստի ինչպես ուսուցիչը՝ նորացնելով դասավանդման մեթոդները, այնպես էլ դպրոցը՝ հագեցնելով կաբինետները նոր դիդակտիկ պարագաներով և համապատասխան մասնագետներով:

Ինֆորմացիոն դաշտի զարգացմանը զուգընթաց պետք է հարստացնել ինֆորմատիկայի դասասենյակը համակարգիչներով, որպեսզի առարկաների ուսուցումը լինի հագեցված, բովանդակալից:

Շարունակել առարկայական միամսյակների անցկացումը: Նշանակել դասալսումներ, միջոցառումներ, բաց դասեր, ձևավորել պատի թերթեր և ստենդեր:

Նոր ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանում ընդգրկել միջոցառումներ նվիրված Անկախության 31-ամյա, Հայոց բանակի 31-ամյա, Կոմիտասի և Թումանյանի ծննդյան 153-ամյա, Երևանի 2804-ամյա հոբելյաններին, Ֆրանկոֆոնիայի 21-րդ գագաթնաժողովին: Հաշվի առնելով նոր գնահատման համակարգի ներդրումը և բոլոր քննական միասնական քննությունների անցկացումը, տարվա ընթացքում առավել ուշադիր լինել և բացատրական աշխատանք տանել ինչպես ուսուցիչների, այնպես էլ աշակերտների հետ: Խրախուսանքներ և պարգևատրումներ բարձր առաջադիմությամբ աշակետներին: Հետևողականորեն վերահսկել արտադասարանական աշխատանքները, մեծ ուշադրություն դարձնել դասղեկների ժամերին, խմբակների աշխատանքներին:

Ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանը հաստատվել է մանկավարժական խորհրդի նիստում /31.08.2022թ. արձ. h 2 :

Կատարման պատասխանատուներ՝

Տնօրեն՝ Ա.Ավետիսյան

Փոխտնօրեն՝ Ս.Հայրապետյան

Փոխտնօրեն՝ Ն.Զաքարյան

Մասնախմբերի ղեկավարներ՝ Հ.Թադևոսյան, Ս.Սաղոյան, Ն.Սարգսյան

## ԲԱԺԻՆ I
## Հիմնական պարտադիր կրթության իրականացում

Այս բաժինը պլանավորելիս շեշտը դրվում է ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման, պարտադիր ուսուցման ենթակա երեխաների ուսման մեջ ընդգրկելու և մաղումների դեմ պայքարելու հարցերի վրա:

| հ/հ | Աշխատանքի բովանդակություն | Կատարման ժամկետ | Կատարող անձ | Նշում կ.մ. |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Կատարել համայնքի կողմից հաստատված տարածքի 6-15 տարեկան պատանիների ու աղջիկների հաշվառում և նրանց ընդգրկել ուսման մեջ | օգոստոսի 10-25 | տնօրեն, ամրացված ուսուցիչներ | |
| 2. | Առցանց հայտագրված և համապատասխան փաստաթղթեր ներկայացրած երեխաներին հաշվառել: Հաշվառել նաև այլ դպրոցներից և արտերկրից տեղափոխված աշակերտներին: | օգոստոս-սեպտեմբերի 5 | տնօրեն, ամր.ուս. | |
| 3. | Աշխատանք տանել պարտադիր ուսուցումից դուրս մնացած պատանիներին ու աղջիկներին դպրոց վերադարձնելու ուղղությամբ | ուստարվա սկզբին | տնօրինություն, դասղեկներ, դասվարներ | |
| 4. | Պայմաններ ստեղծել դպրոցում սովորող սոցիալապես անապահով և անբարենպաստ ընտանիքների համար | ուստարվա ընթացքում | տնօրինություն, ծնող.խորհուրդ | |
| 5. | Խիստ վերահսկողություն սահմանել սիստեմատիկ ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ, ժամանակին կ անխել դրանք | ուստարվա ընթացքում | տնօրինություն, դասղեկներ, դասվարներ | |
| 6. | Ուշադրության կենտրոնում պահել դժվար առաջադիմող և երկտարեցի աշակերտներին: Հաճախակի ստուգել նրանց հետ տարվող աշխատանքները | ուստարվա ընթացքում | տնօրինություն, դասղեկներ փոխտն դաստ գծով | |
| 7. | Աշխատանք տանել 5-8-րդ դասարանների դժվար երեխաների և նրանց ծնողների հետ | ուստարվա ընթացքում | փոխտն. դաստ. գծով, դասղեկներ, ծնող.խորհուրդ | |
| 8. | Պարտադիր ուսուցման իրականացմանը մասնակից դարձնել ծնողներին, ծնողական և հոգաբարձուների խորհուրդները | անհրաժեշտու-թյան դեպքում | տնօրեն | |
| 9. | Թույլ առաջադիմող և երկտարեցի աշակերտներին, ըստ նրանց ընդունակությունների ու հետաքրքրությունների, ընդգրկել արտադպրոցական խմբակներում, ակումբներում, սեկցիաներում | ուստարվա ընթացքում | դասղեկներ, խմբակների ղեկավարներ | |

## ԲԱԺԻՆ II
## Աշխատանք մանկավարժական կադրերի հետ, նրանց որակավորման բարձրացումը

Այս բաժնում պլանավորվում են մանկավարժական կադրերի ընտրության տեղաբաշխման մասնախմբերի ղեկավարների և դասղեկների նշանակմամբ, ուսուցչի ինքնակրթության և կատարելագործման համար նորմալ պայմանների ստեղծման, մանկավարժական կադրերի գիտատեսական և մեթոդական մակարդակի բարձրացման, ուսուցիչներին մանկավարժական հետազոտական աշխատանքներում ներգրավելու, մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման, ընդհանրացման և ներդրման, ուսուցչի աշխատանքի գիտական կազմակերպման և այլ հարցեր:

| h/h | Աշխատանքի բովանդակություն | Կատարման ժամկետ | Կատարող անձ | Նշում կ.մ. |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Նշանակել դասղեկներ | օգոստոսի 25-30 | տնօրեն, ղեկավարներ | |
| 2. | Դպրոցում կազմակերպել մանկավարժության և տարիքային հոգեբանության մշտական գործող սեմինար /ուսուցիչների կոնկրետ խմբի համար/ | ուստարվա ընթացքում | տն.տեղակալ դաստ. գծով | |
| 3. | Դասղեկների աշխատանքը կատարելագործելու նպատակով դպրոցում կազմակերպել 5-9 դասարանների մեթոդմիավորում | սեպտեմբեր 15-20 | տն.տեղակալ դաստ. գծով | |
| 4. | Ուսումնասիրել առաջավոր աշխատանքի փորձը և տարածել դպրոցում | ուստարվա ընթացքում | տնօրինություն մ/մ նախագահներ | |
| 5. | Ուսուցիչներին ընդգրկել վերապատրաստման, վերաորակավորման դասընթացներում /ըստ պահանջի/ | ուստարվա ընթացքում | տնօրեն, տեղակալներ | |
| 6. | Դասալսումների միջոցով մեթոդական օգնություն ցույց տալ մանկավարժներին: Հատուկ ուշադրություն դարձնել սկսնակ ուսուցիչների վրա | ուստարվա ընթացքում | տնօրեն, ուս.գծով տեղակալ | |
| 7. | Ուսուցիչների համար կազմակերպել դասախոսություններ, սեմինարներ, կոնսուլտացիաներ: Այդ նպատակով հրավիրել բարձրորակ մասնագետներ նաև այլ հաստատություններից /նշել թեմատիկան/ | ուստարվա ընթացքում | տն.տեղակալ ուս.գծով | |
| 8. | Ուսուցիչներին ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումներին, գիտության ու կրթության նախարարության հրահանգներին, հրամաններին և այլ նորմատիվ փաստաթղթերին | ուստարվա սկզբին | տնօրեն, տեղակալներ | |
| 9. | Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին | ուստարվա ընթացքում | տն.տեղական ուս.գծով | |
| 10. | Ստեղծագործող ուսուցիչներին ընդգրկել մանկավարժական հետազոտական աշխատանքներում | ուստարվա ընթացքում | տն.տեղակալներ | |

## ԲԱԺԻՆ III
## Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում

| հ/հ | Աշխատանքի բովանդակություն | Կատարման ժամկետ | Կատարող անձ | Նշում կ.մ. |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Ուսուցիչներին ժամանակին ապահովել ուսումնական ծրագրով | ուստարվա սկիզբ | տնօրեն, ուս.գծով տն.տեղակալ | |
| 2. | Ուսումնական առարկաների դասավանդումը բարելավելու նպատակով կատարելագործել կաբինետային համակարգը, հարստացնել դպրոցի ուսումնանյութական բազան | փետրվար 15 | տնօրեն, կաբ.վարիչներ | |
| 3. | Կազմակերպել անսարք ապարատների վերանորոգում և դնել դրանք օգտագործման մեջ | | տնօրեն, կաբ.վարիչներ | |
| 4. | Աշխատանք տանել կաբինետները անհրաժեշտ նյութերով ու սարքավորումներով ապահովելու ուղղությամբ | ուստարվա ընթացքում | տնօրեն, կաբ.վարիչներ | |
| 5. | Աշխատանք տանել աշակերտներին դասագրքերով ապահովելու ուղղությամբ | օգոստոսի 20 սեպտեմբերի 15 | տնօրեն | |
| 6. | Սովորողների գիտելիքների որակը բարելավելու նպատակով կատարել դասալսումներ, արդյունքները քննարկել մանկխորհրդի նիստերում | ամեն շաբաթ | փոխտնօրեններ | |
| 7. | Ուսումնասիրել հետևյալ առարկաների դասավանդման վիճակը և արդյունքները քննարկել<br>ա/ հայոց լեզու, գրականություն<br>բ/ հայ ժող. պատմություն<br>գ/մաթեմատիկա<br>դ/ տառաճանաչություն 1-ին դաս.<br>ե/ օտար լեզու<br>զ/կենսաքիմիա, ֆիզիկա, աշխարհ. | <br><br>Նոյեմբեր<br>Ապրիլ<br>Մարտ<br>Մարտ<br>Հոկտեմբեր<br>Փետրվար | տնօրեն, ուս.գծով տեղակալ | |
| 8. | Ուսումնասիրել լաբորատոր գործնական աշխատանքների վիճակը ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության դասերին | նոյեմբեր 15-20 | փոխտնօրեն | |
| 9. | Կազմակերպել առարկայական շաբաթներ<br>- հայոց լեզվից<br>- օտար լեզվից<br>- մաթեմատիկայից<br>- տարր. դասարաններ | <br>հոկտ. 26-30<br>փետրվար<br>մարտ վերջ.շաբ.<br>մայիս վերջ.շաբ. | փոխտնօրեն ուս. գծով | |
| 10. | Անցկացնել դպրոցական օլիմպիադա<br>- հայոց լ., ռուսաց լ., օտար լ., աշխարհ., պատմ., քիմիա, ինֆորմատիկա առարկաներից<br>- մաթեմ., ֆիզիկա առարկաներից | դեկտեմբեր<br><br><br>փետրվար | տնօրինություն, հանձնաժողովներ | |
| 11. | Հատուկ ուշադրություն դարձնել տարրական դասարանների առարկայական ծրագրերի կատարման և յուրացման որակին | ուստարվա | տնօրինություն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ընթացքում | դասղեկներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 12 | Տնօրինության կողմից անցկացնել գրավոր աշխատանքներ մաթեմատիկա, հայոց լեզու օտար լեզու առարկաներից | Նոյեմբեր-դեկտեմբեր Ապրիլ-մայիս | ՓՏՆ ուս. գծով Ս.Հայրապետյան | |
| 13 | Կազմակերպել նպատակային և թեմատիկ էքսկուրսիաներ հանրապետության տարբեր վայրեր, թանգարաններ, թատրոններ | Ուստարվա ընթացքում | Դասղեկներ ՓՏՆ դաստ գծով Ն.Զաքարյան | |
| 14 | «Լավագույն կաբինետ» մրցույթի անցկացում, ամփոփում | Ուստարվա ընթացքում,մայիս | Կաբինետի վարիչներ | |
| 15 | Անցկանցնել միջոցառումներ նվիրված Անկախության 31-ամյա, Հայոց բանակի 31-ամյա, Կոմիտասի և Թումանյանի ծննդյան 153-ամյա, Երևանի 2804-ամյա հոբելյաններին և Ֆրանկոֆոնիայի 21-րդ գագաթնաժողովին: | Ուստարվա ընթացքում | Դասղեկներ, ՓՏՆ դաստ գծով Ն.Զաքարյան | |
| 16 | Տարբեր մարզաձևերից անցկացնել միջդասարանական միջոցառումներ | Նոյեմբեր, ապրիլ | Ֆիզկ ուս ՓՏՆ դաստ գծով Ն.Զաքարյան | |
| 17 | Կազմակերպել շաբաթօրյակներ դպրոցի բակում | Ամեն ամսվա վերջին շաբաթ օր | Դասղեկներ, ՓՏՆ դաստ գծ Ն.Զաքարյան | |
| 18 | Սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջանցքներն ու կաբինետները | Ուստարվա ընթացքում | Դասղեկներ, ՓՏՆ դաստ գծ. Ն.Զաքարյան | |
| 19 | «Տարվա լավագույն միջոցառում» ամփոփումը | Ուստարվա ընթացքում,մայիս | ՓՏՆ դաստ գծ. Ն.Զաքարյան | |

ԲԱԺԻՆ IV

Ներդպրոցական վերհսկողության համակարգ

| հ/հ | Աշխատանքի բովանդակություն | Կատարման ժամկետ | Կատարող անձ | Նշում կ.մ. |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Ստուգել ծրագրային նյութերի և թեմատիկ պլանավորման վիճակը ուսումնական առարկաներից | սեպտ. 10-15 | փոխտնօրեն ուս.գծով | |
| 2. | Յուրաքանչյուր ամսվա վերջին հանրագումարի բերել սովորողների ուշացումներն ու բացակայությունները և արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցություններում | տարվա ընթացքում | տնօրեն, դասղեկներ | |
| 3. | Ստուգել հիմնական պարտադիր կրթության օրենքի կատարման վիճակը դպրոցում՝ ելնելով հանրակրթական հաստատության կանոնադրության պահանջներից և արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցություններում | նոյեմբեր-դեկտեմբեր | տնօրեն, դասղեկներ | |
| 4. | Ավարտական դասարանների սովորողների գիտելիքներին, կարողություններին ու հմտություններին ծանոթանալու և համապատասխան աշխատանք կազմակերպելու նպատակով ստուգողական գրավոր աշխատանքներ անցկացնել հայոց լեզվից ու մաթեմատիկայից և արդյունքները քննարկել մ/մ | դեկտեմբեր ապրիլ | փոխտնօրեն ուս.գծով | |
| 5. | Տարեկան երկու անգամ ստուգել ավարտական դասարանների սովորողների գիտելիքների որակի համապատասխանությունը պետական չափորոշիչներին ու նորմերին | | տնօրինություն, դասղեկներ | |
| 6. | Ստուգել լաբորատոր և գործնական աշխատանքների կատարումը քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության դասերին | հոկտեմբեր ապրիլ | փոխտնօրեն ուս.գծով, մ/մ նախագահներ | |
| 7. | Ստուգել 8-րդ դասարանում հայոց, ռուսաց լեզուներից և մաթեմատիկայից տրվող ստուգողական աշխատանքների քանակը և որակը՝ արդյունքները քննարկել մ/մ նիստերում | կիսամյակների վերջում | փոխտնօրեն ուս.գծով, մ/մ նախագահներ | |
| 8. | Ստուգել դասամատյանների, աշակերտական օրագրերի ու տետրերի վարման վիճակը | պարբերաբար | փոխտնօրեն ուս.գծով | |
| 9. | Ստուգել դժվարությամբ առաջադիմող և երկտարեցի աշակերտների հետ տարվող աշխատանքները, արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցություններում | հոկտեմբեր մարտ | փոխտնօրեն ուս.գծով | |

## ԲԱԺԻՆ V
## Աշխատանք ծնողների հետ

| հ/հ | Աշխատանքի բովանդակություն | Կատարման ժամկետ | Կատարող անձ | Նշում կ.մ. |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ, ընտրել խորհրդի անդամներ և նախագահներ | սեպտ. 1-10 | փոխտնօրեններ, դասղեկներ | |
| 2. | Նախապատրաստել ընդհանուր ծնողական ժողով և քննարկել դպրոցի առջև դրված համատեղ լուծման ենթակա հարցեր | ուստարվա ընթացքում | տնօրինություն, դասղեկներ | |
| 3. | Ձևավորել հաստատության ծնողական խորհուրդ, նրա անդամներին ծանոթացնել խորհրդի կանոնադրության հետ | սեպտեմբեր | տնօրեն, տեղակալներ | |
| 4. | Կազմել ծնողների համար անցկացվող զրույցների ու զեկուցումների թեմատիկ պլան | սեպտեմբեր | փոխտ դաստ. գծ, դասղեկներ, ծն. կոմիտեի նախ. | |
| 5. | Պլանավորել ծնողական խորհրդի աշխատանքները | ուստարվա ընթացքում | տնօրեն, ծն. խորհրդի նախ. | |
| 6. | Հաստատության գործունեությամբ շահագրգռված անձանցից կազմել հոգաբարձուների խորհուրդը, ընտրել նախագահ | սեպտ. 1-5 | տնօրեն | |
| 7. | Խորհրդի անդամներին ծանոթացնել հոգաբարձուների խորհրդի կանոնադրությանը | սեպտեմբեր | տնօրեն | |
| 8. | Հոգաբարձուների խորհրդի նիստերում քննարկել դպրոցի ուսումնանյութական բազայի հարստացման և սոցիալապես անապահով և կարիքավոր աշակերտներին օգնություն կազմակերպելու համար | ուստարվա ընթացքում | տնօրեն, խորհրդի նախագահ | |
| 9. | Կոորդինացնել ծնողական և հոգաբարձուների խորհուրդների գործունեությունը | ուստարվա ընթացքում | տնօրեն | |
| 10. | Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը սովորողների ուսուցման ու դաստիարակության բարելավման նպատակով | ուստարվա ընթացքում | տնօրեն, փոխտնօրեններ | |
| 11. | Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադպրոցական դաստիարակչական աշխատանքներին | սիստեմատիկ | փոխտնօրեն դաստ.գծով, դասղեկներ | |

## ԲԱԺԻՆ VI
## Ֆինանսատնտեսական գործունեություն և ուսումնանյութական բազայի ամրապնդում

| հ/հ | Աշխատանքի բովանդակություն | Կատարման ժամկետ | Կատարող անձ | Նշում կ.մ. |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Կազմել ծախսերի նախահաշիվ, բյուջետային հատկացումների փաստաթղթերը ներկայացնել գանձապետարանի բաժանմունք | ֆին. տարվա ընթացքում | տնօրեն, գլխ. հաշվապահ | |
| 2. | Արտաբյուջետային ծախսերի նախահաշիվը համաձայնեցնել հոգաբարձուների խորհրդի հետ | ուստարվա ընթացքում | տնօրեն | |
| 3. | Ժամանակին դիմել տեղական կառավարման մարմիններին շենքի վերանորոգման և գույքի ձեռք բերման նպատակով համապատասխան ֆինանսավորում ստանալու համար | ուստարվա ընթացքում | տնօրեն | |
| 4. | Աշխատանք տանել դպրոցական գույքի, սարքավորումների, ուսուցման տեխնիկական միջոցների, դիդակտիկ պարագաների և այլ նյութերի օգտագործման և պահպանման ուղղությամբ | ուստարվա ընթացքում | տնօրեն, տնտ. տնտ. գծով | |
| 5. | Կատարել դպրոցի հաշվեկշռում եղած գույքի ու սարքավորումների հաշվառում | նոյեմբեր | տեղ. տնտ. գծով | |
| 6. | Ապահովել շենքի ջերմային, լուսային և օդային ռեժիմը: Կանոնավոր վիճակում պահպանել հակահրդեհային միջոցները | ուստարվա ընթացքում | տեղ. տնտ. գծով | |
| 7. | Բարեկարգ վիճակում պահել դպրոցի շենքը, բակը, մարզահրապարակը: Հետևել անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանմանը | ուստարվա ընթացքում | տեղ. տնտ. գծով, դասղեկներ | |
| 8. | Աշխատանք տանել կաբինետներ-լաբորատորիաների կահավորման, հարստացման, եղած գույքն ու սարքավորումները արդյունավետ օգտագործելու ուղղությամբ | սիստեմատիկ | կաբ. վարիչներ, լաբորանտներ | |

## ԲԱԺԻՆ VII
## Կազմակերպչական մանկավարժական միջոցառումներ

| հ/հ | Աշխատանքի բովանդակություն | Կատարման ժամկետ | Կատարող անձ | Նշում կ.մ. |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Կատարել աշխատանքի բաժանում դպրոցի ղեկավարների միջև | օգոստոս 20-25 | տնօրեն | |
| 2. | Կոմպլեկտավորել դասարանները | | տնօրինություն | |
| 3. | Սահմանել աշխատանքային ռեժիմը | օգոստոս 20-25 | տնօրինություն | |
| 4. | Որոշել պարապմունքների հերթայնությունը | օգոստոս 20-25 | տնօրեն | |
| 5. | Նշանակել դասղեկներ և դասվարներ | օգոստոս 20-25 | տնօրեն | |
| 6. | Անցկացնել մանկավարժական խորհրդի նիստ | օգոստոս 30 | տնօրեն | |
| 7. | Նշանակել ուսումնական կաբինետների վարիչներ | սեպտեմբեր | Տնօրեն | |
| 8. | Նշանակել մասնախմբերի ղեկավարներ | սեպտեմբեր | Տնօրեն, փոխտն. ու.ս.գծով | |
| 9. | Ուսումնական գույքը, դասարանները նախապատրաստել ուստարվա սկզբին | օգոստոս | Տնօրեն, փոխտն. տնտ.գծով | |
| 10. | Աշակերտներին նախապատրաստել ուստարվա սկզբին (նախնական հավաք) | Օգոստոսի 30-31 | | |
| 11. | Կարգավորել աշակերտների գործերը | սեպտեմբեր | Դասղեկներ | |
| 12. | Ձևավորել դասամատյանները | սեպտեմբեր | Դասղեկներ, փոխտն.ու.ս.գծ. | |

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

նիստ I

| հ/հ | Աշխատանքի բովանդակություն | Կատարման ժամկետ | Կատարող անձ | Նշում կ.մ. |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Անցյալ ուսումնական տարվա արդյունքները և նոր ուսումնական տարվա խնդիրները /զեկուցում/ | օգոստոս 30 | տնօրեն | |
| 2. | Քննարկել և հաստատել ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը | | տնօրեն, մ/մ նախագահներ | |
| 3. | Դպրոցական բաղադրիչի բաշխում | | փոխտնօրեն ուս.գծով | |
| 4. | Նոր ուսումնական պլանի առանձնահատկությունները և կատարման ուղիները | | | |
| 5. | Վերաքննությունների ամփոփում /զեկ. Ս.Հայրապետյան/ | | | |
| 6. | ՀՀ-ում անցում համընդհանուր ներառական կրթության /զեկ. Ա.Ավետիսյան/ | | | |

նիստ II

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Առաջադիմության մասին /զեկ. Ս.Հայրապետյան/ | Հոկտեմբեր 25-30 | | |
| 2. | Ձմռան նախապատրաստման աշխատանքների կազմակերպումը | | Դասղեկներ | |
| 3. | Ընթացիկ հարցեր | | Տնօրեն, դասղեկներ | |

նիստ III

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | 1-ին կիսամյակի արդյունքների քննարկում | դեկտեմբեր 20-28 | տնօրեն | |
| 2. | Քննարկել սովորողների գիտելիքների որակը հայ ժող. պատմ. և հայոց լեզու, գրականություն, ֆիզիկա, քիմիա առարկաներից:<br>Համադպրոցական գրավոր աշխատանքների և արդյունքների վերլուծություն: | | տն.տեղակալ ուս.գծով<br>դասղեկներ | |
| 3. | Լսել տնօրենի դաստիարակության գծով տեղակալի հաղորդումը առաջին կիսամյակում կատարված արտադասարանական, արտադպրոցական աշխատանքների արդյունքների մասին: /զեկուցող Ն.Զաքարյան/ | | տն.տեղակալ դաստ.գծով | |

նիստ IV

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1.<br><br>2. | Լսել և քննարկել դասղեկների հաղորդումը կատարված աշխատանքների մասին<br><br>Ընթացիկ հարցեր | մարտ 20-25 | տն.տեղակալներ<br><br>տն.տեղակալներ, դասղեկներ | |

նիստ V

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1.<br><br>2. | 2-րդ կիսամյակի գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփում<br><br>Ընթացիկ հարցեր | Ապրիլ-մայիս | տն.տեղակալներ, դասղեկներ | |

նիստ VI

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1.<br><br>2. | Ուսումնասիրել ծրագրերի կատարման, ավարտական և փոխադրական քննությունների նախապատրաստման ուղղությամբ տարվող աշխատանքների վիճակը դպրոցում<br><br>2-րդ կիսամյակի ուսումնադաստիարակչական աշխատանքների ամփոփում | մայիս 20-25 | տն.տեղակալներ<br><br>տն.տեղակալներ, դասղեկներ | |